ZCMC

ԶԱՆԳԵԶՈՒՐ
ՊԱՀՊԱՆԵԼՈՎ
ԱՐԺԵՔՆԵՐԸ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

Տարբերակ 1.0
Հաստատված է տնօրենների
խորհրդի կողմից
27.11.2024թ.

Մարդու իրավունքների վերաբերյալ քաղաքականություն

www.zcmc.am

Մարդու իրավունքների վերաբերյալ քաղաքականություն

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

03 ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

04 ՄԵՐ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

06
- Անվտանգության և առողջության պահպանումը աշխատավայրում
- Աշխատավայրի անվտանգություն

07
- Պատշաճ աշխատանքային պայմաններ
- Հարկադիր աշխատանքի, երեխաների աշխատանքի և մարդկանց թրաֆիքինգի արգելք
- Խտրականության բացառում
- Միավորումների ազատություն և կոլեկտիվ բանակցություններ

08
- Շրջակա միջավայրի վրա ազդեցություն
- Սոցիալական, մշակութային և տնտեսական իրավունքները տեղական համայնքներում. Համայնքի և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն

09 ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

10 ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն» կամ «ԶՊՄԿ») պարտավորվում է իր գործունեությունն իրականացնելիս մշտապես առաջնորդվել մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի սկզբունքով և պահպանել դրանք իր գործունեության բոլոր ուղղություններում:

Սույն Քաղաքականության նպատակն է արձանագրել ԶՊՄԿ-ի հանձնառությունը հարգելու մարդու իրավունքները, այդ թվում՝ նշված հանձնառությունն արտացոլող հատուկ սկզբունքները, քաղաքականության մակարդակի գործողությունները և պարտականությունները: ԶՊՄԿ-ն գնահատում է յուրաքանչյուրի հարգանքը մարդու իրավունքների հանդեպ ինչպես աշխատավայրում, այնպես էլ ԶՊՄԿ գործունեության իրականացման հարակից համայնքներում:
Սույն Քաղաքականության հիմնական նպատակն է ապահովել մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ներկառուցումը ԶՊՄԿ-ի ռազմավարական պլանավորման և գործառնական որոշումների կայացման գործընթացներում: Այդ նպատակով հանքարդյունաբերության գործունեության ողջ ցիկլի ընթացքում անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն ցուցաբերել, ուսումնասիրություններ և վերլուծություններ իրականացնել՝ մարդու իրավունքների ոտնահարման հնարավոր ռիսկերը բացահայտելու, հնարավորության դեպքում դրանք կանխելու, իսկ նման ռիսկերի բացահայտման կամ կանխարգելման անհնարինության դեպքում՝ դրանց բացասական ազդեցությունները մեղմելու ուղղությամբ:

Սույն Քաղաքականության ներքո «մարդու իրավունքներ» հասկացությունը ներառում է այն իրավունքները, որոնք ամրագրված են 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, 1966 թվականի մարդու իրավունքների դաշնագրերում, Աշխատանքի միջազգային կազմակերպության 1998 թվականի Աշխատանքի հիմնարար սկզբունքների և իրավունքների մասին հռչակագրում և Աշխատանքի Միջազգային Կազմակերպության 8 հիմնարար կոնվենցիաներում (1) (վերջինս՝ առավելապես վերաբերելի է ԶՊՄԿ աշխատակիցներին), մարդու իրավունքների վերաբերյալ այլ կիրառելի համաձայնագրերում, պայմանագրերում և ուղեցույցներում:

Սույն Քաղաքականությունը ԶՊՄԿ ԲՍԿ-ի շրջանակի անբաժանելի մասն է և պետք է ընթերցվի այլ հիմնական քաղաքականությունների հետ միասին, ներառյալ ԶՊՄԿ վարքագծի կանոնագիրքը, Սոցիալական քաղաքականությունը, Տեղական զբաղվածության մասին քաղաքականությունը, Առողջության պահպանման և աշխատանքային անվտանգության քաղաքականությունը, Աշխատավայրում բռնության, խտրականության, ոտնձգության և վրեժխնդրության կանխարգելման քաղաքականությունը, Բնապահպանական քաղաքականությունը, Կլիմայի փոփոխության քաղաքականությունը և Կենսաբազմազանության քաղաքականությունը (որոնք միասին կազմում են ԶՊՄԿ-ի ԲՍԿ շրջանակը):

(1) Միավորման ազատության և կազմակերպման իրավունքի պաշտպանության կոնվենցիա, 1948թ. (թիվ 87), Կազմակերպման և կոլեկտիվ բանակցությունների իրավունքի կոնվենցիա, 1949թ. (թիվ 98), Հավասար վարձատրության մասին կոնվենցիա, 1951թ. (թիվ 100), Խտրականության մասին (Զբաղվածության և զբաղմունքի) կոնվենցիա, 1958թ. (թիվ 111), Նվազագույն աշխատանքային տարիքի մասին կոնվենցիա, 1973թ. (թիվ 138), Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիա, 1957թ. (թիվ 105), Երեխաների աշխատանքի վատթարագույն ձևերի մասին կոնվենցիա, 1999թ. (թիվ 182)

ՄԵՐ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

ԶՊՄԿ-ի ազդեցությունը մարդու իրավունքների վրա ունի ինչպես արտաքին, այնպես էլ ներքին հարթություններ: Կարևոր է նշել, որ որոշակի գործողություններն ու ազդեցությունները հաճախ արտահայտվում են միաժամանակ այս երկու հարթություններում: Թեև դրանցից յուրաքանչյուրն ունի իր յուրահատուկ թիրախը և շրջանակը, սակայն դրանք չպետք է դիտարկվեն առանձին:

Ներքին հարթությունը, մասնավորապես, առնչվում է ԶՊՄԿ-ի աշխատակիցների և Ընկերության տարածքում գտնվող այլ անձանց մարդու իրավունքներին:

Արտաքին հարթությունը ընդգրկում է ԶՊՄԿ-ի գործունեության իրականացման տարածքներում գտնվող անձանց, ինչպես նաև այլ անձանց, ովքեր հանդիսանում են ԶՊՄԿ-ի գործունեության ազդակիր, և մարդու իրավունքների ոլորտում օրինական շահեր ունեցող շահագրգիռ կողմեր, հատկապես՝ ԶՊՄԿ-ի գործունեության ազդակիր անձիք:

ԶՊՄԿ-ն հավատարիմ է մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի սկզբունքին՝ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարթություններում: Խախտումների կանխարգելումից զատ, ԶՊՄԿ-ն պարտավորվում է ներառել մարդու իրավունքների պաշտպանության նկատառումները իր սոցիալական ծախսերում՝ առաջնորդվելով Սոցիալական քաղաքականությամբ ամրագրված սկզբունքներով:



ՄԵՐ ՀԱՆՁՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Ելնելով ոլորտի առանձնահատկություններից՝ մարդու իրավունքների նկատմամբ իր հանձնառությունը ԶՊՄԿ-ն կառուցում է հետևյալ հենասյուների վրա.

- Աշխատավայրում անվտանգության և առողջության պահպանման պարտավորություն.
- Աշխատավայրում անվտանգության պահպանման պարտավորություն՝ ապահովելով բռնության, ոտնձգության, հետապնդումների սպառնալիքներից և այլ վտանգավոր և վնասող գործողություններից զերծ աշխատանքային միջավայր.
- Աշխատավայրում արժանապատիվ պայմանների ապահովման պարտավորություն, ներառյալ՝ աշխատանքային ժամերի և աշխատանքի վարձատրության մասով.
- Երեխաների աշխատանքի և հարկադիր աշխատանքի ցանկացած ձևի արգելք.
- Խտրականության արգելք.
- Հարգանք միավորումների ազատության և կոլեկտիվ բանակցությունների իրավունքի հանդեպ.
- Բնապահպանական բացասական ազդեցությունների հնարավորինս նվազագույն մակարդակի ապահովում.
- Տեղական համայնքներում սոցիալական, մշակութային և տնտեսական իրավունքների վրա զուտ դրական ազդեցության ապահովման հանձնառություն.
- Համայնքի և շահագրգիռ կողմերի ներգրավվածության ապահովման հանձնառություն:

Մարդու իրավունքների պահպանման համատեքստում ԶՊՄԿ-ն առաջնորդվում է ՀՀ օրենսդրության, ԶՊՄԿ ներքին իրավական ակտերի և կանոնակարգերի, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային չափանիշների պահանջներով: Վերջիններս հատկապես կարևոր են այն դեպքերում, երբ տեղական օրենքներն ու կանոնակարգերը բացակայում են կամ սահմանում են միջազգային նորմերի համեմատ պակաս խիստ պահանջներ:

Մարդու իրավունքներին առնչվող իր հանձնառություններն իրականացնելու համար ԶՊՄԿ-ն իր ռազմավարական պլանավորման և գործառնական որոշումների կայացման շրջանակներում պատշաճ ուշադրություն կդարձնի մարդու իրավունքների մասով առկա մտահոգություններին և ռիսկերին՝ առանձնահատուկ կարևորելով վերոհիշյալ հիմնական սկզբունքները:

Ավելին, ԶՊՄԿ-ն իր Կայուն զարգացման տնօրինության միջոցով պարտավորվում է.

- Պարբերաբար գնահատել մարդու իրավունքների վերաբերյալ առկա ռիսկերը, քաղաքականությունները և ազդեցությունները:
- Սեղմ ժամկետում հետաքննել ենթադրյալ խախտումները և ձեռնարկել համապատասխան գործողություններ՝ մարդու իրավունքների վրա ցանկացած բացասական ազդեցություն մեղմելու համար:
- Թափանցիկ կերպով հաշվետու լինել իրականացված գործողությունների մասին:

Անվտանգության և առողջության պահպանումը աշխատավայրում

ԶՊՄԿ-ն ընդունում է, որ աշխատավայրում առողջությունն ու անվտանգությունը ապահովելու առումով ունի ինչպես իրավական, այնպես էլ բարոյական պարտավորություն: Այս պարտավորությունը ի կատար ածելու համար ԶՊՄԿ-ն հետևում է անվտանգության և առողջության պահպանման առումով գործող օրենսդրությանը, մշակում, հաստատում և կիրառում է առողջության պահպանման և աշխատանքային անվտանգության գծով ներքին կանոնակարգեր: Ընկերությունն այս նպատակով հենվում է իր աշխատակիցների փորձառության և գիտելիքների, ինչպես նաև միջազգային առաջատար փորձի վրա: Անհրաժեշտության դեպքում կներգրավվեն արտաքին փորձագետներ՝ ապահովելու այդ փորձի արդյունավետ ներդրումը տեղական համատեքստում:

Յուրաքանչյուր ղեկավարից և աշխատակցից պահանջվում է զգոնություն ցուցաբերել դժբախտ պատահարների, վնասվածքների և առողջության վրա բացասական ազդեցությունների հնարավոր ռիսկերի բացահայտման հարցում: Բոլոր հայտնաբերված ռիսկերը պետք է զեկուցվեն ղեկավարությանը՝ համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ կազմակերպելու համար:

Աշխատավայրի անվտանգություն

Բոլոր աշխատողներն ունեն անվտանգ աշխատավայրի իրավունք: ԶՊՄԿ-ն չի հանդուրժում աշխատավայրում բռնությունը, ոտնձգությունը, ահաբեկումը և այլ վտանգավոր կամ վնասող վարքագիծը: Այս մոտեցման իրագործման և անվտանգ աշխատավայր ապահովելու համար հիմնական քայլերը ներառում են.

- ԶՊՄԿ-ի աշխատավայրում բռնության, խտրականության, ոտնձգության և վրեժխնդրության կանխարգելման քաղաքականության կիրարկում:
- ԶՊՄԿ անվտանգության դեպարտամենտի առաջնորդությամբ անվտանգության համակողմանի համակարգի ստեղծում:
- Անվտանգության սպառնալիքների կանոնավոր վերանայում և համապատասխան միջոցների ձեռնարկում:

Կարևոր է հասկանալ, որ որպես մասնավոր ընկերություն՝ ԶՊՄԿ-ն չի կարող ստանձնել պետական մարմինների գործառույթներ, այդ թվում՝ անվտանգության ապահովման առնչությամբ: Հետևաբար, եթե անվտանգության սպառնալիքն այնպիսին է, որ պահանջվում է իրավապահ մարմինների միջամտություն՝ անհրաժեշտ է անհապաղ ծանուցել համապատասխան մարմիններին:

Պատշաճ աշխատանքային պայմաններ

Թեև աշխատանքի պատշաճ պայմանների ապահովման հարցում առանցքային դեր ունեն աշխատանքի անվտանգությունը, առողջությունը և անվտանգությունը, սակայն ԶՊՄԿ-ի հանձնառության շրջանակը դրանցով չի սահմանափակվում: ԶՊՄԿ-ն նպատակ ունի նաև ապահովել Ընկերության բոլոր աշխատակիցների վարձատրությունը օրենքի, աշխատանքային պայմանագրերի մրցակցային պայմանների համաձայն, և նրանց աշխատանքային ժամերի համապատասխանությունը գործող օրենսդրական (ներառյալ կիրառելի կոլեկտիվ պայմանագրերի) պահանջներին և միջազգային չափանիշներին:

Հարկադիր աշխատանքի, երեխաների աշխատանքի և մարդկանց թրաֆիքինգի արգելք

Երեխաների աշխատանքը, հարկադիր աշխատանքը և մարդկանց թրաֆիքինգը խստիվ արգելված են գործող օրենքներով, միջազգային պայմանագրերով և ոտնձգություն են մարդկային արժանապատվության և ԶՊՄԿ-ի հիմնական արժեքների նկատմամբ: ԶՊՄԿ-ն չի հանդուրժում երեխաների աշխատանքի, հարկադիր աշխատանքի կամ մարդկանց թրաֆիքինգի որևէ դրսևորում, և իր բոլոր գործընկերներից պահանջում է նույն չափանիշների պահպանումը:

ԶՊՄԿ-ի որևէ աշխատակից կամ ԶՊՄԿ-ի հետ համագործակցող գործընկեր որևէ պարագայում չպետք է ստիպողաբար կամ պարտադրված աշխատանք կատարի իր կամքին հակառակ:

Հաշվի առնելով իր գործունեության բնույթը՝ ԶՊՄԿ-ն բոլոր դեպքերում զերծ է մնում 18 տարեկանից ցածր անձանց աշխատանքի ներգրավելուց:

Խտրականության բացառում

Հավասար հնարավորությունների ապահովումը և արժանիքների հիման վրա որոշումների կայացումը ԶՊՄԿ-ի հիմնարար արժեքներից են: Ինչպես նշված է Աշխատավայրում բռնության, խտրականության, ոտնձգության և վրեժխնդրության կանխարգելման քաղաքականությունում, ԶՊՄԿ-ն չի հանդուրժում խտրականությունը և նպատակաուղղված է ապահովելու ներառական միջավայր, որը զերծ է ցանկացած հիմքով խտրականությունից, ներառյալ, առանց սահմանափակման, սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ հայացքների, սեռական կողմնորոշման, ազգային փոքրամասնության պատկանելության, ծննդյան, հաշմանդամության, տարիքային կամ այլ անձնական կամ սոցիալական գործոններով պայմանավորված խտրականությունից:

Միավորումների ազատություն և կոլեկտիվ բանակցություններ

ԶՊՄԿ-ն ճանաչում և հարգում է Ընկերության աշխատակիցների՝ արհմիություններ ստեղծելու, դրանց միանալու կամ չմիանալու և կոլեկտիվ բանակցություններ վարելու ազատությունը գործող օրենսդրությանը համապատասխան: Աշխատակիցները պետք է համոզված լինեն, որ նման ընտրությունը չի հանգեցնի որևէ վրեժխնդրության, ահաբեկման կամ ոտնձգությունների: ԶՊՄԿ-ն հավատարիմ է իր աշխատակիցներին ներկայացնող արհմիությունների հետ բաց երկխոսության և սոցիալական գործընկերության խթանմանը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցություն

Շրջակա միջավայրի պաշտպանությունը առանցքային դեր ունի մարդու իրավունքների ապահովման գործում: Թեև բնապահպանական խնդիրները հիմնականում լուծվում են ԶՊՄԿ-ի բնապահպանական, Կլիմայի փոփոխության և Կենսաբազմազանության քաղաքականությունների շրջանակներում, սակայն կարևոր է նաև հաշվի առնել բնապահպանական խնդիրների հնարավոր ազդեցությունը սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների վրա, հատկապես տեղական համայնքներում: ԶՊՄԿ-ն մշտապես հաշվի է առնում նման ազդեցությունները իր ռազմավարական պլանավորման և գործառնական որոշումների կայացման գործընթացներում:

Սոցիալական, մշակութային և տնտեսական իրավունքները տեղական համայնքներում. Համայնքի և շահագրգիռ կողմերի ներգրավվածություն:

Հաշվի առնելով, որ հանքարդյունաբերական գործունեությունը չի կարող ամբողջապես զերծ լինել բացասական ազդեցություններից, ԶՊՄԿ-ն հանձնառու է դրանք հասցնել նվազագույնի և հակակշռել դրական ազդեցություններով: Մասնավորապես, ԶՊՄԿ-ն կիրականացնի հասցեական գործողություններ տեղական համայնքների սոցիալական, մշակութային և տնտեսական իրավունքների պահպանման ուղղությամբ: Սա ներառում է սոցիալական խնդիրների երկարաժամկետ լուծումներ, մշակութային ժառանգության պահպանում, հարստացում և տնտեսական կայունության խթանում:

ԶՊՄԿ-ն ընդունում է իր նշանակալի դերը այն համայնքներում, որտեղ գործունեություն է իրականացնում: Ընկերությունը մեծապես կարևորում է տեղական համայնքների հետ բաց երկխոսության և շարունակական ներգրավվածության պահպանումը, հատկապես վերջիններիս վրա անմիջական ազդեցություն ունեցող հարցերում, ինչպիսիք են հողօգտագործման իրավունքները, ջրի հասանելիությունը և առողջությունը: ԶՊՄԿ-ն հանձնառու է ռազմավարական պլանավորման և գործառնական որոշումների կայացման գործընթացում մանրամասն ծանոթանալ, ուսումնասիրել և, որքանով որ դա վերաբերելի է, հաշվի առնել տեղական համայնքների տեսակետները: Հատուկ ուշադրություն է դարձվելու խոցելի խմբերի կարիքներին:

Այս հանձնառությունը կատարելու համար ԶՊՄԿ-ն պարտավորվում է համայնքների և ավելի լայն շահագրգիռ կողմերի համար ստեղծել հեշտ հասանելի համայնքային բողոքարկման մեխանիզմ, որը թույլ կտա ժամանակին միջոցներ ձեռնարկել հնարավոր խնդիրները հասցեագրելու և պատշաճ լուծելու համար:

ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Որպես մեր համընդհանուր հանձնառության մաս՝ այս քաղաքականության դրույթների կատարումն ապահովելու համար պատասխանատվություն են կրում ԶՊՄԿ-ի բոլոր ղեկավարները, ովքեր ներգրավված են աշխատանքի անվտանգության և առողջության պահպանման, ինչպես նաև մարդու իրավունքներին առնչվող բնագավառներում: Ցանկացած խնդիր, որը չի կարող արդյունավետորեն լուծվել վերջիններիս մակարդակով, պետք է անհապաղ զեկուցվի բարձր ղեկավարությանը: Մարդկային ռեսուրսների կառավարման բաժինը, Կայուն զարգացման տնօրինությունը և բարձր ղեկավարությունը պարտավոր են ապահովել այս քաղաքականության դրույթների կատարման նկատմամբ ընդհանուր վերահսկողություն:

Կայուն զարգացման տնօրինությունը նաև լրացուցիչ պատասխանատվություն է կրում շարունակական մշտադիտարկման և հաշվետվողականության համար:

Այս հաշվետվողականության շրջանակներում ԶՊՄԿ-ն հանձնառու է հրապարակել մարդու իրավունքներին առնչվող մեր հանձնառությունները, նախաձեռնությունները և հայտարարությունները՝ Մարդու իրավունքների սույն քաղաքականությանը համահունչ: Նշվածը իրագործելու նպատակով մենք հաշվետվություն ենք ներկայացնում Մարդու իրավունքների մեր տարեկան զեկույցի և Կայունության զեկույցի միջոցով, որոնք ներառում են ՄԱԿ-ի ուղեցույցի սկզբունքների հաշվետվության շրջանակը՝ լրացուցիչ հսկողություն և թափանցիկություն ապահովելու նպատակով:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն Քաղաքականությունը կիրառելի է ԶՊՄԿ-ի բոլոր աշխատողների, ներառյալ բարձրաստիճան ղեկավարների, կապալառուների և ԶՊՄԿ-ի Տնօրենների խորհրդի անդամների նկատմամբ: Այն արդիական է հանքի շահագործման բոլոր փուլերում և նպատակ ունի ուղղորդել ԶՊՄԿ հարաբերությունները ԶՊՄԿ աշխատակիցների, կապալառուների և գործընկերների հետ:

Հրապարակման ամսաթիվը 25.12.2024թ.

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ

Հեղինակ և նախագծի ղեկավար՝
Արտյոմ Պետրոսյան

Հեղինակ՝
Արմեն Ստեփանյան